ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Պատմական տարաբախտ պայմանների բերումով մայր հայրենիքից սկիզբ առած դանգվածային արտագաղթի հետևանքով աշխարհի տարբեր երկրամասերում բազմաթիվ հայ գաղթօջախներ առաջացան, որոնք գոյատևել են և իրենց ներդրումը կատարել հայ հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում։

Հայ ժողովրդի ազատագրման իրական հնարավորությունը բացառապես Ռուսաստանի հետ կապելու հետևանքով առանձնապես մեծանում է ռուսահայ գաղթօջախների նշանակությունը, որոնց մեջ զգալի է XVIII դարի վերջին քառորդում ստեղծված Նոր-Նախիջևանի գաղութը։ Գաղութի հիմնադրումը, նրա լայն ինքնավարություն ստանալու հանգամանքը հասկանալի ու պատճառաբանված կլինի, եթե համառոտակի ուրվագծենք դրանք պայմանավորող ժամանակի պատմական իրադրությունը։

Եկատերինա II-ը իր թագավորության շրջանում որդեգրեց Ռուսաստանի համար բախտորոշ նշանակություն ունեցող պետրոսյան քաղաքականության սկզբունքները և մասնավորապես XVIII դ. վերջին քառորդում սկսեց ակտիվորեն իրականացնել այն։ Հաջողություններն առավել նշանակալից էին հարավային սահմանագծերը ընդարձակելու և Սև ծով դուրս գալու ռուսական արքունիքի վաղուց փայփայած նպատակները իրականացնելու ենդրում։

Ռուսաստանի հարավային լայնածավալ տափաստանները, կամ ինչպես ընդունված է ասել պատմական գրականության մեջ՝ Նովոռոսիան, գրեթե անմարդաբնակ, ամայի երկրամաս էր։ Այդ հսկայական տարածությունները բաժանում էին Ռուսաստանը Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Սև և Ազովի ծովերի հյուսիսային ափերից և մեծ չափով դժվարացնում նրանց գրավումը. չկար բնակչություն, հետևապես և արշավող զորքերի համար չկային ժամանակավոր հանգստի բնակավայրեր, չկար ջուր, պարեն, վառելիք[1]։

Եկատերինա II-ի կառավարությունը հասկանում էր, որ առանց հարավային տափաստանների բնակեցման և տնտեսական յուրացման անհնար է նվաճել և ամրանալ Սև ծովի հյուսիսային ափերում։ Ահա թե ինչու կառավարությունը ռազմական առաջընթացին զուգընթաց մեծ ջանքեր է գործադրում երկրամասի բնակեցման ուղղությամբ։ Վերաբնակեցման շարժումը կազմակերպված բնույթ է ընդունում հատկապես XVIII դ. 70-ական թթ. սկսած, երբ Նովոռոսիայի, Ազովի և Աստրախանի նահանգների կառավարիչ է նշանակվում մեծ կշիռ ու հեղինակություն ունեցող և անսահման իրավունքներից օգտվող Գ. Ա. Պոտյոմկինը։

Նովոռոսիայի բնակեցումը նախատեսվում էր կատարել լայն մասշտաբներով։ Եվ իրոք, տարավում վերաբնակվողների նկատմամբ պետության հովանավորող քաղաքականության շնորհիվ արագորեն աճում է բնակչությունը։ Սակայն այն մեծ ծավալ ընդունել չէր կարող, քանի որ Հորտատիրական կարգերի հարուցած խոշընդոտների հետևանքով ռուսական և ուկրաինական տարբեր բավական չէր լայնածավալ երկրամասը յուրացնելու համար։ Ահա թե ինչու հարավի վերաբնակեցումը արագացնելու շարժառիթներով կառավարությունը նոր միջոցների է դիմում և տնտեսական մեծ արտոնություններ, դավանանքի ազատություն, սեփական օրենքներով ու ազգային սովորություններով դատավարության իրավունքներ տալով՝ այնտեղ է հրավիրում նաև տարբերկրացիներին[2]։ Գ. Պոտյոմկինը խոշոր միջոցներ է ծախսում և կանգ չառնելով արգելքների առջև, մեծ եռանդով ու համառությամբ ձեռնարկում է նոր երկրամասը վերափոխելու ընդարձակածավալ շինարարական աշխատանքներ։ Տարբեր երկրներից և կենտրոնական Ռուսաստանից հրավիրվում են ճարտարապետներ ու այլ մասնագետներ, մեկը մյուսի հետևից հիմնադրվում էին նոր քաղաքներ, նավահանգիստներ, ռազմական ամրոցներ ու գյուղեր։

---

[1] Տե՛ս Д. П. Миллер, Заселение Новороссийского края и Потемкин. Харьков, 1895, էջ 10—11։

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 44—45։

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 35—40։

Կայսրության հարավային սահմանների ընդարձակումը կատարվում էր Թուրքիայի դիվանագիտական և ռազմական դիմադրություններ հաղթահարելու ճանապարհով։

Առաջին ռուս-թուրքական պատերազմի հաջող ավարտից հետո, 1774 թ. Քյուչուկ-Կայնարջիի հաշտության դաշնագրով Ռուսաստանին հաջողվեց զգալի տարածություններ և քաղաքներ միացնելուց զատ հասնել նաև այն բանին, որ Ղրիմի խանությունը անջատվի Թուրքիայից և անկախ հայտարարվի[4]։ Դրանով հնարավորություն էր բացվում Ղրիմի հարցը արմատականորեն լուծելու թերակղզին կայսրությանը միակցելու համար։

Ղրիմի միացումը հնարավորություն կընձեռեր Ռուսաստանին դուրս գալու ծով, կապահովեր բնակչության անվտանգությունը՝ թաթարական ավազակային հարձակումներից և առավել նպաստավոր պայմաններ կստեղծեր երկրամասի յուրացման ու սևծովյան առևտրի ընդարձակման համար[5]։

Ռուսաստանի հարավային մերձծովյան տափաստանների բնակեցման ու տնտեսական յուրացման և Ղրիմի միացման նպատակով տարվող լարված պայքարի պայմաններում կառավարական ոլորտներում հղացավ թերակղզու քրիստոնյա ազգաբնակչության գաղթեցման ծրագիրը։

Ղրիմի խանության ներսում արհեստները ու առևտուրը, երկրագործությունն ու այգեգործությունը գրեթե ամբողջությամբ գտնվում էին քրիստոնյաների՝ հայերի և հույների ձեռքում։ Խանի եկամուտների հիմնական աղբյուրը նրանցից գանձվող հարկերն ու տուրքերն էին[6]։ Քրիստոնյա բնակչությունը Ղրիմից դուրս բերել կնշանակեր մեծ հարված հասցնել խանին, զրկել նրան գլխավոր եկամուտների աղբյուրներից և տնտեսական կոխման մեջ դնել կայսրությունից։ Հայերի և հույների գաղթեցումով միաժամանակ հնարավորություն էր ստեղծվում Նովոռոսիայի անմարդաբնակ տափաստանները առևտրի, արհեստագործության և երկրագործության մեջ հրմտացած ժողովուրդներով բնակեցնելու, դարերով խոպան հողերը մշակելու, տնտեսական կյանքը աշխուժացնելու։

Ահա թե ինչու 1778 թ. գարնանից Ղրիմի քրիստոնյա բնակչության գաղթեցումը դառնում է Եկատերինա II-ի կառավարության՝ հարավային Ռուսաստանում տարվող քաղաքականության կարևոր խնդիրներից մեկը։

1778 թ. օգոստոսին, ակնկալվող արտոնությունների հույս փայփայելով՝ գաղթականի ցուպ են վերցնում Ղրիմի հայ զանգվածները։ Արտագաղթող ղրիմահայերը, որոնց թիվը հասնում էր շուրջ 12600 հոգու, մեկուկես տարի ճանապարհներին դեգերելով, մեծ դժվարություններ ու զրկանքներ կրելով[7], 1780 թ. հունվարին հասնում են իրենց հատկացված մշտական բնակավայրը Դոն գետի աջափնյա հարթավայրում՝ Դիմիտրի Ռոստովսկու ամրոցի մերձակայքը։ Հանդիսավոր իրադրության մեջ, ամրոցի պետի և Դոնի հեծելազորի մասնակցությամբ ու զինվորական երաժշտախմբի նվագակցությամբ նոր բնակավայրի ծնունդը ազդարարող հրանոթների կրակոցների տակ ռուսահայերի հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը կատարում է Նախիջևան քաղաքի և ապա Ջալդր, Թոփտի, Մեծ-Սալա, Սուլթան-Սալա և Նեսվիտա հայկական գյուղերի հիմնարկման արարողությունը[8]։

Այսպիսով ղրիմահայերի գաղթը և Նոր-Նախիջևանի հիմնադրումը տեղի չի ունեցել տարերայնորեն, այն կազմակերպված էր ռուսական կառավարության կողմից և, ինչպես նկատեցինք, պայմանավորված էր վերջինիս տնտեսական ու ռազմա-քաղաքական ձգտումներով։ Ցարական կառավարության այդ որոշակի հետաքրքրություններն էլ շատ բանով կանխորոշում էին նոր հաստատվող գաղութի իրավունքների ու ինքնավարության շրջանակները։ Նոր-Նախիջևանը, իր հինգ հայկական գյուղերով, բավական մեծ առանձնաշնորհումներ և ազգային սովորութային նորմերի վրա խարսխվող ինքնավարություն ստացավ։ Առաջ անցնելով, սակայն, պետք է նկատել, որ վերաբնակեցումը ավարտելուց փոքր-ինչ հետո, դարավերջին և առանձնապես XIX դարի արդեն առաջին տասնամյակներից կառավարության վերաբերմունքի մեջ հակադարձ երևույթ է

[4] Տե՛ս Е. П. Дружинина, Кучук-кайнарджийский мир 1774 г., М. 1955, էջ 279—280։

[5] Տե՛ս А. Петрушевский, Генералиссимус князь Суворов, т. I, СПБ, 1884, էջ 207։

[6] Տե՛ս Г. Писаревский, Из истории иностр. колониз. в России в XVIII в., М., 1909, էջ 206։

[7] Տե՛ս «Կռունկ Հայոց Աշխարհին», 1863, էջ 321։

[8] ՀՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր հին ձեռագրերի գիտա-հետազոտական ինստիտուտ, Մատենադարան, ձեռ. N 8815, թ. 265—268։

սկսվում։ Հարևան գավառներից, նահանգային վարչությունից և արքունիքի պետական պաշտոնյաների կողմից գաղութի առանձնաշնորհումները վերացնելու նպատակով հաճախակի միջամտություններ և անընդմեջ դաստկացող հարվածներ են տեղում։

Դրանց ընդդիմանալու համար գաղթօջախի հայությունը մշտապես վկայակոչել է իր ինքնավարությունը կայսերական շնորհագրով հաստատվելու և սրանով կյանքի կոչվելու հանգամանքը։ Այլ խոսքով՝ շուրջ հարյուրամյա ինքնուրույն գոյության ընթացքում Նոր-Նախիջևանի՝ «բարձրագույն շնորհագրով» հաստատված ինքնավարությունը այն հիմնական կռվանն է եղել, որով նա պայքարել է իր գոյատևման համար։

XVIII դարի վերջին քառորդում ազատագրական ակնկալությունների աշխուժացման մթնոլորտում, Ռուսաստանի հովանավորության ներքո հայկական պետականությունը վերականգնելու «դաշնադրության» նախագծերի մշակման շրջանում Կովկասի նախագոներում զուտ հայաբնակ քաղաքի և հինգ գյուղերի հիմնադրումը մեծ տպավորություն է գործում ժամանակի հայության վրա։ Նոր-Նախիջևանում հայկական ինքնուրույն կյանքը վերականգնելու, հայկական մշակույթը զարգացնելու հույսեր են ծնվում։ Այս առումով որոշակի պատմական հետաքրքրություն են ներկայացնում հայկական ազատագրական շարժումների ավանգարդում ընթացող հնդկահայ հատվածի կողմից Նախիջևանում հայկական դպրոց բանալու մեծագումար նվիրաբերությունները, ռուսահայ ազատագրական գործիչների կողմից Լազարյան ճեմարանը Մոսկվայի փոխարեն (ինչպես նշված էր Հովհաննես Լազարյանի կտակում) Նոր-Նախիջևանում հիմնելու մտահղացումը, Հովակիմ Լազարյանի հակվածությունը դրան և այդ առթիվ սկսված բանակցություններն ու գրագրությունները[9], Խալդարյանի հայկական տպարանը 1780-ական թթ. վերջում Պետերբուրգից Ն. Նախիջևանի Ս. Խաչ վանքը տեղափոխելու[10] իրողությունը և ուրիշ խոսուն փաստեր։

Ռուսական արքունիքը, ղրիմահայերին ազգային սովորություններն վրա խարսխվող ինքնավարություն ապահովելով՝ յուրովի արձագանքում էր հայ ժողովրդի ազատագրական բաղձանքներին։ Հարկավ, առանց միտումի չէր, որ Նոր-Նախիջևանը և շրջակա հայկական գյուղերը նահանգապետի տարեկան հաշվետվություններում և այլ պաշտոնական փաստաթղթերում «հայկական օկրուգ» անունով էին կոչվում։

Նշանակալից է եղել Նոր-Նախիջևանի ինքնավարության ազդեցությունը ռուսահայ կյանքի վրա։ Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի, Գրիգորիոպոլի և մյուս գաղութները ձգտել են համանման իրավունքներ ու արտոնություններ ստանալ և սեփական ինքնուրույնությունը պահպանելու գոյամարտերում հաճախ են վկայակոչել և նեցուկ դարձրել Նոր-Նախիջևանին տրված առանձնաշնորհումները։ Ահա թե ինչու որոշակի հետաքրքրություն է ներկայացնում գաղութին տրված առանձնաշնորհումների և այդ հիման վրա ձևավորված նրա ինքնավարությանը ի մոտո ծանոթությունը։

Նոր-Նախիջևանի ինքնավարության առաջացումը երկար նախապատմություն ունի և անշուշտ ավելի վաղ է սկսվել, քան տեղի է ունեցել գաղութի հիմնադրումը։ Տակավին նախքան գաղթագնացությունը, երբ առաջ եկավ և որոշակի կազմակերպված բնույթ ընդունեց թերակղզու քրիստոնյա բնակչության տեղահանման հարցը, ինչպես հայերին, այնպես էլ գաղթեցման ենթակա մյուս ազգաբնակչությանը, բնականաբար, առաջին հերթին հետաքրքրում և մտահոգում էր իրենց ապագա համակեցության հեռանկարը։ Ղրիմի հայ և հույն ազգաբնակչությունը 1778 թ. հուլիսի 16-ին ռուսական զորքերի գլխավոր հրամանատար ֆելդմարշալ Ռումյանցև-Զադունայսկուն և նրա միջոցով կայսրուհուն ներկայացնում է կամովին ռուսաց տիրապետության սահմաններում վերաբնակվելու համաձայնագիր և միաժամանակ առաջադրում որոշ պահանջներ։ Ղրիմում թողնելիք շարժական և անշարժ գույքի արժեքը փոխհատուցելու, ճանապարհի ծախսերը և ընթացիկ այլ պետքերը կառավարության կողմից հոգալու պայմանից զատ վերաբնակվողները միաժամանակ ներկայացնում են ապագայի իրենց կյանքի պայմաններն ապահովող մի շարք պահանջներ, որոնք հիմնականում վերաբերում էին հետևյալին.

1. Ազովի նահանգում նոր բնակավայրի կոնկրետ տեղի ընտրությունը վերապահել իրենց։

2. Տաս տարի ժամանակով ազատել ամեն տեսակ հարկերից և պետական պարտավորություններից, իսկ տաս տարուց հետո պահանջվելիք հողային հարկի, գլխահարկի և մյուս տուրքերի չափը որոշել նախօրոք։

3. Ընդմիշտ ազատել զինվորագրությունից (ռեկրուտ) և զորքին օթևան հատկացնելու (պոստոյ) պարտավորությունից։

---

9 Տե՛ս Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 104, գ. 4, վ. 3։

10 Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թ. 6, վ. 18։

4. Գաղթողների հոգևոր առաջնորդներին ցմահ վերապահել իրենց իրավունքները։

5. Դատավարության գործերի տնօրինումը թողնել վերաբնակվողներին, որոնք այդ նպատակով իրենց միջից հատուկ անձնավորություններ կարող են ընտրել և դատական խնդիրներում հաշվետու լինել միայն նահանգային վարչությանը»[11]։

Պահպանված վավերագրերից երևում է, որ ղրիմահայերը չէին բավարարվում սոսկ պայմաններ առաջադրելով։ Տեսնելով գաղթը անաղմուկ և հապշտապ կազմակերպելու կառավարության մտադրությունը, նրանք դանդաղում էին շարժվել իրենց տեղերից, դրանով հարկադրելով իշխանություններին՝ վավերացնելու կամ հավաստիացում տալու վերը հիշատակված պայմանները իրականացնելու վերաբերյալ։ Այսպես, 1778 թ. օգոստոսին ֆելդմարշալ Ռումյանցևը Նովոռոսիայի կառավարիչ Գ. Ա. Պոտյոմկինին գրում էր, որ քրիստոնյաները դեռևս տատանվում են գաղթել, ուստի հարկ է միջոցներ ձեռնարկել արագացնելու խոստացված արտոնագրերը[12]։

Մյուս կողմից ղրիմահայերը դիմում են ոչ պաշտոնական ուղիներով իրենց ցանկություններն իրականացնելու միջոցին։ Ղրիմում հայտնի էին Լազարյանների համբավավոր տոհմի, մասնավորապես Աղաղարի անդրանիկ որդու՝ ազնվական Հովհաննես Լազարյանի՝ բարձրաստիճան պետական գործիչների շրջանում ունեցած աղդեցիկ կապերը։ Ստանալով Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու մասին կայսրուհու համաձայնությունը, Ղրիմի հայ հասարակությունը բարձրագույն շնորհագիրը հաջողացնելու և արագացնելու նպատակով երկու պատգամավոր է առաքում Պետերբուրգ։ Ղրիմահայերի հոգևոր առաջնորդ Պետրոս վարդապետ Մարկոսյանը հատուկ նամակ է գրում Հովհաննես Լազարյանին և հանգամանորեն պատմելով գաղթի կազմակերպման հանգամանքները, խնդրում է նրա միջնորդությունը կայսերական հրովարտակը հաջողացնելու համար։ «Ներկա ընտրությամբ ամենայն հասարակությանս, — գրում է Պ. Մարկոսյանը, — առաքեցին Յարութիւն Իգնատոսեան Սպանդովն և Կարապետ Ոսկանեան Ամիրովն վասն մեծաւ խոնարհութեամբ հայցելոյ միջնորդութեամբ բարձր ազնվականութեանն ձերոյ օգոստոսափառ և ամենողորմ կայսերուհոյն հրովարտակ կայսերական վասն հիմնաւորութեան յավիտենականի բնակութեան նոցին»[13]։ Ընդառաջելով ղրիմահայերի խնդրանքին, Հ. Լազարյանը իր հերթին դիմում է այդ ժամանակ մայրաքաղաքում գտնվող Գ. Պոտյոմկինին և վերջինիս միջոցով հաջողացնում բնակության հարմար վայր և կայսերական շնորհագիր ստանալու նրանց ցանկությունների կատարումը[14]։

Արխիվներում պահպանվել են գաղթողների կողմից կառավարությանը ներկայացրած պահանջների մշակված տարբերակները «Ինչպիսի հիմունքներով են Ղրիմից գաղթող հայերը ցանկանում վերաբնակվել ռուսական կայսրությունում և խնդրում բարձրագույն հրովարտակ» վերնագրով։ Այդ պայմաններից, կամ ինչպես ժամանակին անվանել են՝ «կոնդիցիաներ»-ից, առաջինը (ռուսերեն և հայերեն լեզուներով) պահվում է ՀՍՍՌ Պետական Մատենադարանի Լազարյանների արխիվում[15], իսկ մյուսը՝ Լենինգրադի կենտրոնական պատմական արխիվի՝ նույնպես Լազարյանների ֆոնդում[16]։ Երկուսն էլ թվագրված չեն։ Դրանք նույնարովանդակ վավերագրեր են, միայն Լենինգրադի արխիվում պահվողը առաջինի առավել մշակված ու վերախմբագրված,

---

[11] Տե՛ս Н. Дубровин, Присоединение Крыма к России (рескрипты, письма, реляции и донесения), том I, 1778, էջ 556—557։

[12] Նույն տեղում, էջ 614—615։

[13] Մատենադարան, Լազարյանների արխիվ, թ. 109, գ. 22, վ. 23։

[14] «Դիվան հայոց պատմության», գիրք Թ, Թիֆլիս, 1911, էջ 23։

[15] Տե՛ս Մատենադարան, Լազարյանների արխիվ, թղթ. 109, գ. 16, վ. 33, թ. 1—6։

[16] Տես ЦГИА СССР, ф. 880, оп. I, д. 19, лл. 100—104. Լենինգրադի արխիվի Լազարյանների ֆոնդի սեպագիր նյութերի մեջ հայտնաբերելով «կոնդիցիաներ»-ի այս տարբերակը, Վ. Դիլոյանը իրավացիորեն շեշտում է, որ սույն «պայմաններ»-ի մշակման գործում, որի համար հիմք են ծառայել 1763 թ. մանիֆեստը և 1779 թ. հուլների շնորհագիրը, մեծ մասնակցություն է ունեցել Հովհ. Լազարյանը։ Նա միաժամանակ մտառու քննարկման ենթարկելով «կոնդիցիաներ»-ը, գտնում է (մեր կարծիքով փոքր ինչ չափազանցության մեջ ընկնելով), որ այն ղրիմահայ բուրժուազիայի պահանջները բավարարող ու նրա դասակարգային շահերն արտահայտող փաստաթուղթ է։ Տե՛ս В. А. Дилоян, Хозяйственная, политическая и культурная деятельность Лазаревых в России во второй половине XVIII в., автореферат, Ереван, 1962, էջ 16։

սակայն ոչ իմաստափոխված օրինակն է և այդ առումով էլ միայն մասնակի տարբերություններ ունի նրա համեմատությամբ։

Ամենայն հավանականությամբ «կոնդիցիաներ»-ի վերամշակված այդ տարբերակը կազմվել է 1779 թ. ամռանը. համենայն դեպս հունիս ամսից ոչ առաջ։

Վերոհիշյալ «պայմաններ»-ը բաղկացած էին տասներեք կետերից և ունեին հետևյալ բովանդակությունը։ Ազովի նահանգում բնակավայր ընտրելու իրավունքը վերապահվում է նորեկներին։ Վերջիններս կարող են հաստատվել ցանկացած անտառապատ և դաշտավարության ու անասնապահության համար անհրաժեշտ տարածություն ունեցող վայրերում։ Այդ ամենը տրվելու էր նրանց մշտապես, ժառանգաբար օգտագործման համար։ Բաղթողները բնակության համար կառուցելու են երեք գյուղ և մեկ քաղաք՝ Ալեքսանդրբուրգ անունով։ Պետությունը պարտավորվելու էր կառուցումների համար տասնամյա ժամկետով առանց տոկոսի նրանց վարկավորել, իսկ նյութապես ապահովված անձնավորությունները կարող են տներ կառուցել ըստ ցանկության։ Վերաբնակիչներին թույլատրվելու է առանց հարկ վճարելու ազատորեն ձկնորսությամբ զբաղվել, իսկ կողմնակի բնակիչներին՝ այն արգելվելու է։

«Կոնդիցիաներ»-ում նախատեսվում էր առևտրի ու արհեստագործության ազատ զարգացում։ Նորաբնակներին իրավունք էր վերապահվելու անարգել զբաղվել ամեն տեսակ արհեստներով, գործարաններ հիմնել և ազատ առևտուր անել երկրի ներսում և արտասահմանում։ Առևտրի համար նրանք կարող էին ծովային նավեր ունենալ, իսկ հայկական գյուղերը, իրենց պահանջի համապատասխան՝ գետային նավեր։ Այնուհետև «կոնդիցիաներ»-ը պահանջում էին ապահովել այգեգործությամբ և գինեգործությամբ ազատորեն զբաղվելու հնարավորություն։ Նորաբնակները տեղում իրավունք պետք է ունենան զբաղվելու օղու և գինու մանրածախ առևտրով, համայնքի տերիտորիաներում այլ անձինք չպետք է օգտվեին այդ իրավունքից։ Գաղթողներին իրավունք էր վերապահվում Ռուսաստանի այլ վայրերում գինու և խաղողի օղու մանրածախ առևտուր անելու։

Առաջադրվում էր դավանանքի լիիրավ ազատության պահանջ։ Հայ բնակչությունը ազատորեն կարող էր եկեղեցիներ և դանգակատներ կառուցել ու կատարել լուսավորչական եկեղեցուն հատուկ ծիսակատարություններ։ Նա, բացառությամբ սակավաթիվ հայ կաթոլիկների, ենթարկվելու էր Արարատյան մայր աթոռի հոգևոր իշխանությանը։ Ռուսաստանի արևմտյան մասի հայ ղաղթօջախներում Հռոմից եկող կաթոլիկացման քաղաքականությունը և այդ հողի վրա լուսավորչականների և կաթոլիկների տևական հակամարտը թելադրում էին աչալուրջ լինել կաթոլիկացման վտանգից խսպառ զերծ մնալու համար։ Դավանանքի հարցին վերաբերող «պայմաններ»-ի յոթերորդ կետում արգելվում էր հակառակ դավանանքի (լուսավորչական թե կաթոլիկ) պատկանող անձանց գայթակղելը և իր հոտի մեջ ներդրվելը։ Նման քայլեր կատարողները պետք է պատժվեին պետական օրենքների ամբողջ խստությամբ։

Գաղթողները «կոնդիցիաներ»-ում նախատեսում էին նաև ռազմական և քաղաքացիական ծառայություններից, զորքին օթևան հատկացնելուց ու սայլակառքով տեղափոխություններ կատարելուց, պետական աշխատանքներից և զինվորակոչությունից առհավետ ազատելու պահանջներ։ Նրանք երեսուն տարով ազատ էին մնալու նաև ամեն տեսակ արքունական հարկերից (բացառությամբ մաքսից), իսկ այդ ժամանակամիջոցը լրանալուց հետո վաճառականները պարտավոր էին վճարել սնփական կապիտալի մեկ տոկոսի չափով, իսկ արհեստավորները և քաղաքացիները յուրաքանչյուր տնից երկու ռուբլի։ Հողագործները վճարելու էին հողահարկ՝ ամեն մի դեսյատին հողամասի դիմաց հինգական կոպեկ։

Ալեքսանդրբուրգում հիմնվելու էր ռատհաուզ[17], ուր արժանավոր անձնավորություններից ընտրվելու էին դատավորներ։ Դատավարությունը կատարվելու էր հայկական ազգային օրենքների ու սովորույթների հիման վրա։ Գյուղերում ռատհաուզը ունենալու էր օրինականությունը պահպանող իր վերահսկիչները։ Քրեական ծանր հանցագործներին ռատհաուզը պարտավոր էր ուղարկել Ազովի նահանգապետին կամ նահանգային գրասենյակ։ Ռատհաուզին էին վերապահվելու նաև ոստիկանության ֆունկցիաները։ Վերջինս պարտավոր էր հարմար մարդ ընտրել քաղաքում ոստիկանապետի պաշտոնը վարելու համար, տալով նրան պահանջվող ծառայողներ և համապատասխան հրահանգներ։ Ռատհաուզը ունենալու էր հատուկ կնիք։ Նա իրավասու էր լինելու իր ենթակայության տակ գտնվող բնակչությանը տալու ինչպես Ռուսաստանի այլ վայրեր, այնպես էլ արտասահման մեկնելու անձնագիր։

---

17 Ռատհաուզը քաղաքային ինքնավարության օրգան էր, որը հիմնվել էր Ռուսաստանում 1699 թ. և զբաղվում էր ֆինանսական ու դատական խնդիրներով։

Ամեն տեսակ սնակենկալներից և պատահականություններից քաղաքը պաշտպանելու համար փոխարքան մեկ ավազ սպա էր նշանակելու, որը իր տրամադրության տակ ունենալու էր առանձին ջոկատ։ Այդ ավազ սպան իր հերթին գյուղերում նշանակելու էր ենթասպաներ՝ մի քանի դինվորներով։ Հիշյալ ենթասպաներն իրավասու չէին լինելու միջամտելու որևէ դատական, քաղաքացիական և ոստիկանական գործերի։ Այդ նպատակով փոխարքան նրանց պետք է գործունեության անհրաժեշտ հրահանգներ տար։

«Կոնդիցիաներ»-ի վերջում նշվում է, որ եթե գաղթող հայերը առևտրի, երկրագործության և մանուֆակտուրաների համար պետությունից օգնություն խնդրելու կարիք ունենան, ապա պետությունը պարտավոր է տալ այդ օգնությունը տաս տարի ժամանակով՝ առանց տոկոսների։ Տաս տարին լրանալուց հետո, եթե անգամ դրամ ստացած անձինք հնարավորություն չունենային այն վերադարձնելու, հասարակությունը պարտավորվում էր երեք տարվա ընթացքում վերադարձնել ստացված գումարը ամբողջությամբ։

«Պայմաններ»-ը կազմելիս օգտագործվել էին Նովոռոսիան բնակեցնելու նպատակով, մասնավորապես օտարերկրացիներին շահագրգռելու համար նրանց մի շարք արտոնություններ ապահովող՝ կառավարական 1763 թ. մանիֆեստը և առավելապես զրիմարնակ հույների կայսերական շնորհագիրը։ Բնավ պատահական չէ, որ Լազարյանների ֆոնդի զրիմահայերի գաղթին վերաբերող նյութերի մեջ «կոնդիցիաներ»-ից զատ գտնվում են նաև 1763 թ. մանիֆեստի և հույների 1779 թ. մայիսի 21-ի շնորհագրի լրիվ տեքստերը[18]։

«Կոնդիցիաներ» կազմողները անմիջականորեն հիմք են ընդունել այդ երկու վավերագրերը ռուսական ընդհանուր օրենքներին չհակասելու, հարավում տարվող նրա քաղաքականությանը համահնչուն դարձնելու ձգտումով։ Միաժամանակ նկատի էին առնված զրիմահայերի ազգային սովորությունները և, ինչպես դժվար չէ նկատել, կազմված էր տակավին գաղթից առաջ ներկայացրած նրանց պահանջների ոգով։

Վերը բերված «կոնդիցիաներ»-ը անմիջական հիմք դարձնելով՝ կառավարական բարձր ոլորտներում մշակվեցին զրիմահայերին տրվող 1779 թ. նոյեմբերի 14-ի առանձնաշնորհումները։

«Պայմաններ»-ը ձևավորելուց և խմբագրելուց հետո պահանջվել է շուրջ երեք-չորս ամիս ժամանակ, մինչև որ դրանք որոշ փոփոխություններ կրելով, կայսերական հրովարտակով պաշտոնական ուժ են ստացել։ Ինքնին հարց է առաջանում, թե հայերի ցանկություններն ու պահանջները որքանո՞վ են հաշվի առնվել և կառավարության կողմից ընդունելի համարվելով՝ իրենց մարմնավորումը գտել առանձնաշնորհումների մեջ։

Կրկնությունից խուսափելու նպատակով ավելորդ ենք համարում հոդված առ հոդված վերապատմել Եկատերինա II-ի զրիմահայերին տված շնորհագիրը[19], նշենք միայն հայերի առաջադրած «պայմաններ»-ի և շնորհագրի տարբերությունները։

«Պայմաններ»-ի երկրորդ կետի համաձայն հայերը նոր բնակավայրում կառուցել էին երեք գյուղ և Ալեքսանդրբուրգ անունով քաղաք։ Հայտնի է, որ երեքի փոխարեն հիմնադրվեց մեկ գյուղ։ Նոր քաղաքը նրանք ցանկացել են Ալեքսանդրբուրգ անվանել՝ հավանաբար կայսրուհու նորածին թոռան, հետագայում ռուսական կայսր Ալեքսանդր Ա-ի անունով։ Սակայն քաղաքը, ինչ-ինչ պատճառներով, կայսրուհու թոռան անունով կոչելը նպատակահարմար չի դիտվել և հրովարտակում փոխարինվել է Նախիջևան անունով։ Սևծովյան մեղմ կլիմա ու գրավիչ բնություն ունեցող երկրից գաղթողները, ընկնելով Դոնի անմարդաբնակ, խստաշունչ տափաստանները, հարկավ, չէին կարող մոռանալ իրենց թողած դարավոր բնակավայրերը։ Նրանք նոր վայրում ամենուրեք աշխատում էին պահպանել հարազատ գյուղերի, եկեղեցիների, անգամ դաշտերի, լեռների ու աղբյուրների անունները, դրանով ստեղծելով Զրիմի պատրանքը։ Ուսումնասիրողների մի մասը, ելնելով այդ հանգամանքից՝ հետևցրել է, թե հայերը նորահաստատ քաղաքը Նախիջևան են անվանել Զրիմի համանուն հայկական գյուղի հիշատակին։ Ոմանք էլ «նախնական իջևան» արտահայտությունից են քաղաքի անունը մակաբերում։ Առավել հավանական է թվում

---

[18] Տե՛ս ЦГИА, СССР, ф. 880, оп. 1, д. 19, лл. 78—79, 158—159.

[19] 1779 թ. նոյեմբերի 14-ին Եկատերինա II-ի ստորագրությամբ տրված հրովարտակը գրված է ռուսերեն և հայերեն լեզուներով, շքեղ կազմի մեջ ամփոփված, մեծադիր գեղեցիկ թղթի վրա։ Ոսկեթել ժապավենով հրովարտակին ամրացված է նրա վավերականությունը հավաստող թիթեղյա տուփի մեջ դրված կայսերական կլոր կնիքը։ Այժմ այն պահվում է ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության պետական պատմական թանգարանում։

ներիչխող տեսակետը, ըստ որի՝ ղրիմահայերի նորահաստատ քաղաքը կոչվել է Արարատյան դաշտի հնագույն քաղաքի՝ Նոյի տապանի առասպելի հետ կապվող Նախիջևանի անունով[20]։

«Պայմաններ»-ում, ինչպես նկատեցինք, նորաբնակները երեսուն տարով ազատվում էին պետական պարտավորություններից, հարկերից, բացառությամբ մաքսի։ Առևտրի ոչ մի սահմանափակում չէր նախատեսվում։ Այնինչ հայերին տրված շնորհագրի համաձայն նրանք պարտավոր էին իրենց սահմաններով անցնող զորամասերին ապահովել պարենով, անհրաժեշտության պարագայում՝ նաև օթևանով։ Հարկերից ազատվում էին երեսունի փոխարեն տասը տարով, իսկ ֆրանսիական օղու ազատ վաճառքը Ռուսաստանում մերժվում էր։ Այլ խոսքով՝ տնտեսական նշանակություն ունեցող այս հարցերում բավականաչափ սահմանափակվում էին նրանց պահանջած արտոնությունները։

Հայ լուսավորչականներին և կաթոլիկներին վերաբերող ներքին դավանաբանական խնդիրներն իսպառ տեղ չեն գտել հրովարտակում։

Գաղութում դատական և ոստիկանական ֆունկցիաները կատարելու համար նախատեսված ատյանները շնորհագրում փոխարինվել էր մագիստրատով։ Ճիշտ է, մագիստրատը թերևս ավելի մեծ իրավունքներ ունեցող վարչական մարմին էր, քան ատյանը, սակայն քանի որ «պայմաններ»-ում ատյանին էլ բավական մեծ իրավասություն էր նախատեսվում, ուստի դրանից որևէ բան չէր փոխվում։

«Կոնդիցիաներ»-ի համաձայն օրինականությանը հետևելու համար գյուղերում նախատեսվում էր ատյանի կողմից ունենալ մեկական ներկայացուցիչ, որը հրովարտակում փոխարինվել էր մեկ ռուս պաշտոնյա ունենալու անհրաժեշտությամբ։

Հանրագումարի բերելով դժվար չէ նկատել, որ «պայմաններ»-ը ամբողջության մեջ ղրիմահայ գաղթականների համար ավելի մեծ իրավունքներ և արտոնություններ էին պահանջում, քան նրանց շնորհված էր կայսերական հրովարտակով։ Ընդհանուր առմամբ հայերի առաջադրած պահանջները խմբագրվել էին նրանց իրավունքներն ու նախատեսվող արտոնությունները սահմանափակելու ուղղությամբ։

Հարկ է նշել, սակայն, որ ղրիմահայերի՝ «պայմաններ»-ում արձանագրված ցանկությունները հիմնականում հաշվի են առնվել և իրենց արտահայտությունն են գտել շնորհագրում։ Նրանում խմբագրված ձևով արտացոլված կամ լիովին դուրս մնացած խնդիրները որակ չէին կազմում։ Ավելին, ղրիմահայերին տրված առանձնաշնորհումները նրանց բախտակից հույներին շնորհած հրովարտակին հետ բաղդատելիս պարզվում է, որ առաջիններին սեփական իրավական և սովորութային նորմերով առաջնորդվելու և ներքին ինքնավարություն ունենալու առավել նշանակալից արտոնություններ էին տրվում, քան հույներին։ Բավական է հիշել թեկուզ այն փաստը, որ հույները մագիստրատ հիմնելու իրավունք չստացան։ Անտարակույս, այդ որոշ առավելությունները պատահականության հետևանք չէին, այլ պայմանավորված էին կովկասյան գծով դեպի հարավ ծավալվելու ընթացքում հայերի համակրությունն ու աջակցությունը շահելու ցարական Ռուսաստանի նկատառումներով։ Հասկանալի է, սակայն, որ Եկատերինա II-ի ձեռքով տրված այդ երկու շնորհագրերն էլ իրենց հիմնական մասում հար և նման էին միմյանց, ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև երկու ժողովուրդների պատմականորեն նույն վիճակում գտնվող և միևնույն շարժառիթներով գաղթեցվող հատվածները, բնականաբար, համանման պայմանների մեջ էին դրվելու։

Այսպիսով, հարավային Ռուսաստանը բնակեցնելու, տնտեսապես այն յուրացնելու և այդ նպատակով այնտեղ հաստատվող օտարերկրացիներին հովանավորելու ընդհանուր քաղաքականության պայմաններում և հայ ազատագրական հերանկարների աշխուժացման ու Ռուսաստանի

---

20 Բավական երկար ժամանակ, մինչև 1838 թ. քաղաքը այդպես էլ անվանվել է։ 1838 թ. Նովոռոսիայի և Բեսարաբիայի գեներալ-նահանգապետ Ս. Ս. Վորոնցովը զեկուցագիր է ներկայացնում պետական սենատ այն մասին, որ հայկական երկու քաղաքների անունների նույնության հետևանքով շփոթվում են գրագրությունները, անգամ կալանավորներն ուղարկվում են սխալ հասցեով և տեղիք տալիս բազում թյուրիմացությունների։ Նույն թվականի փետրվարի 15-ին սենատը որոշում է Տագանրոգի քաղաքապետության (градоначальство) վարչական ենթակայության մեջ գտնվող քաղաքը այսուհետև կոչել Դոնի Նախիջևան, կամ Նոր-Նախիջևան, իսկ Հայկական մարզի քաղաքը՝ ուղղակի Նախիջևան (տե՛ս „Екатеринославские губернские ведомости", 1838. № 15, էջ 69-70)։

21 Տե՛ս Н. Дубровин, Присоединение Крыма к России, т. III, 1887, էջ 196—197։

Հովանավորության ներքո երկրի քաղաքական անկախությունը վերականգնելու պատրանքների շրջանում զրիմահայերին նշանակալից արտոնություններ շնորհվեցին։

Դժվար չէ նկատել, որ թե՛ «կոնդիցիաները»-ը և թե՛ կայսերական շնորհագիրը առաջին հերթին արտահայտում էին զրիմահայ հասարակության բուրժուականացման ուղին բռնած առևտրա-արդյունագործական և կղերա-ազգային վերնախավի շահերը։ Ներքին ու արտաքին առևտրի ազատության, անարգել կերպով մանուֆակտուրաներ և գործարաններ հիմնելու նրանց ձեռնարկության համար լայն ճանապարհ բացող արտոնությունները տրվում էին առևտրա-արդյունագործական շերտերի տնտեսական ազատ զարգացումը ապահովելու նպատակով։ Անշուշտ, ազնվականության վրա հենվող միապետական կառավարությունը չէր կարող մոռանալ ու անտեսել ազնվականության և հոգևորականության ուրույն շահերը։ Հրովարտակը, ինչպես տեսանք, հողային ընդարձակ տարածություններ էր նախատեսում կալվածատիրական շերտերի համար, ինչպես նաև հոգևորականության արտոնյալ վիճակը անփոփոխ պահելու երաշխիք տալիս։

Նոր-Նախիջևանի գաղութի կազմավորման ժամանակ հատկանշականն ու բնորոշը սոցիալ-տնտեսական կյանքի ձևավորման և նրա հետագա զարգացման բնույթի հարցն էր։ Ինչպես արդեն նկատեցինք, հայ գյուղացիները մշտական բնակավայրում ստացած հողամասերի դիմաց վճարելու էին ոչ թե գլխահարկ, Ռուսաստանի ճորտ գյուղացիության նման, այլ հողահարկ՝ հարկ հողից օգտվելու իրավունքի համար։ Նշանակում է հենց գաղթօջախի սկզբնավորման շրջանից ինչպես երկրագործությունը, այնպես էլ արհեստագործությունն ու արդյունաբերությունը խարսխվում են ազատ վարձու աշխատանքի վրա և մեծ չափով զերծ մնում ճորտատիրական կաշկանդումներից։ Դա իր հերթին ուղիներ է հարթում տնտեսական կյանքը ավելի ազատ ու առաջավոր եղանակով՝ կապիտալիստական եղանակով զարգացնելու համար։ Սա կարևոր մի հանգամանք էր, որն ուղենշեց հայ ինքնավար համայնքի սոցիալ-տնտեսական հետագա զարգացման ընթացքը։

Առանձնաշնորհումների ընձեռած հնարավորությունների շրջանակներում և նրա հիման վրա ձևավորվեց նորահաստատ գաղութի ինքնավարությունը։ Տակավին 1780 թ. կազմակերպվում է հայկական մագիստրատը, որը իր մեջ միավորում էր գաղութի (քաղաքի և գյուղերի) թե՛ դատաստանական, թե՛ ոստիկանական և թե՛ գործադիր իշխանության ֆունկցիաները[22]։ Մագիստրատը կառավարվել է երեք դատավորներով, որոնցից մեկը եղել է մագիստրատի նախագահը և կոչվել է «առաջին դատավոր», մյուս երկուսը՝ նրա դատակից կոլեգաները և անվանվել են «երկրորդ դատավոր»։ Ոստիկանության ծառայության համար ընտրվել է երկու հոգի, որոնք մագիստրատում ներկա գտնված ժամանակ մասնակցել են դատարանի ատենական գործերին և դատավարությանը։ Ոստիկան-դատավորներից մեկը կատարել է ոստիկանի պաշտոնը քաղաքում, իսկ մյուսը՝ հայկական գյուղերում։

Մագիստրատի դատավարական և ոստիկանական մասի այդ հինգ դատավորները ընտրվում էին երեք տարի ժամանակով ժողովրդի բոլոր խավերի՝ վաճառականների, քաղաքացիների, արհեստավորների, երկրագործների կողմից։ Ահա այդ դատավորներն էին, որոնք Հրովարտակի 5-րդ հոդվածի համաձայն ընտրվելու էին վիճակահանությամբ և կառավարելու էին հայ հասարակության ամբողջ գործերը։ Նոր-Նախիջևանի պատմության քաջատեղյակ հեղինակ Երվանդ Շահազիզը նկատում է, որ մագիստրատի ընտրությունների ժամանակ անվերապահորեն առաջնություն էին տալիս նյութական կարողության տեր մարդկանց, որպեսզի «առանց քայքայելու յուրյանց տնտեսական և նյութական դրությունը, անձնատուր լինեն հասարակաց գործերին»[23]։

---

22 Մագիստրատը լատիներեն magistratus—իշխանություն, վարչություն բառից է ծագում։ Եվրոպական որոշ երկրներում բուրժուական հարաբերությունների զարգացման շրջանում է այդպես անվանվել քաղաքային վարչությունը։ Մագիստրատները Ռուսաստանում, որպես քաղաքային վարչության օրգաններ, Արևմուտքի երկրների օրինակով, հիմնվել են տակավին Պետրոս 1-ի օրոք, 1718 թ.։ Մագիստրատը ուներ հարկերի հավաքման, դատական, լուսավորական, արհեստավորական համքարությունները վերահսկելու ֆունկցիաներ։ Նրանում ընտրվում էին առևտրա-արդյունաբերական հարուստ շերտերը։ 1775 թ. մագիստրատը վերափոխվում է և դառնում վաճառականների ու քաղաքացիների սոսկ դատական գործերով զբաղվող հաստատություն և իր գոյությունը պահպանում մինչև 1864 թ.։ Նոր-Նախիջևանում առանձին ինքնավար գաղութի գոյության փաստը մագիստրատին առավել մեծ իրավունքներ էր վերապահում։ Նախիջևանի հայկական մագիստրատը փաստորեն օգտվում էր քաղաքային ինքնավարության՝ մինչև 1775 թ. ունեցած լայն իրավունքներից։

23 Ե. Շ ա հ ա զ ի զ, Պատմական պատկերներ, Թիֆլիս, 1903, էջ 12։

նյութական կարողության տեր լինելու հանգամանքը փաստորեն մի պատրվակ էր, որով ինքնավար գաղութի կառավարումը հանձնվում էր իշխող դասերի ձեռքը և արգելակում ու փաստորեն ի չիր դարձնում երկրագործների և քաղաքի ներքնախավերի ընտրվելու և ղեկավարմանը մասնակցելու իրավունքը։

Դատավորների իշխանության տակ գտնվում էր ատենադպիրը, որը դատարանի դիվանատան գլխավորն էր. նրա ձեռքով էին անցնում բոլոր գրագրությունները[24]։ Հետագայում մագիստրատի դատական մասում առաջացան ավագի (ստարոստա) և բանտապետի պաշտոնները։ Ավագի ձեռքին կենտրոնացած էր դատարանի դրամական մասը, նա էր տուգանքներ, հարկեր հավաքողը, դատարանի ներքին ծախսեր կատարողը։ Հայկական գյուղերը, մագիստրատի ընդհանուր ղեկավարությունը ենթակա լինելով հանդերձ, ունեցել են նաև կառավարման տեղական օրգաններ՝ հանձին ատամանի (օտոմանի[25] և ծերերի։ Յուրաքանչյուր գյուղ կառավարվել է մեկ ատամանի և չորս ծերերի միջոցով, որոնք ընտրվում էին ձայների մեծամասնությամբ, մեկ տարի ժամանակով։ Մագիստրատի գրավոր և բանավոր հրամանները ուղղվում էին ատամանին և ծերերին, վերջիններս հայտնում էին դրանք տվյալ գյուղի հասարակությանը, որի մեծամասնության ընդունած վճիռն էլ պարտադիր էր բոլորի համար։ Ատամանի և ծերերի պարտականությունն էր մագիստրատի հրամանների և հանձնարարությունների կատարմանը հետևելը, հարկերի գանձմանը և «անհնազանդ» գյուղացիներին հասարակության առաջ «խրատելն» ու հանդիմանելը։ Այդ միջոցը ազդեցություն չգործելու պարագայում հանդգնավոր պետք է ներկայացվեր մագիստրատ։

Քաղաքում և գյուղերում կայսերական շնորհագրի պահանջի համաձայն պաշտոնավարել են նաև հատուկ ռուս ներկայացուցիչներ, որոնք սակայն իրավասու չեն եղել միջամտելու տվյալ հասարակության ներքին գործերին, այլ համարվել են միայն օրինականության պահպանողներ ու հսկիչներ։ Յուրաքանչյուր գյուղ պարտավոր էր վճարել նրանց տարեկան 60 ռ. ռոճիկ, հատկացնել բնակարան, վառելիք, մեկ փութ յուղ, երկու խսիր ցորեն, ձիու համար խոտ։

Մագիստրատ հիմնելուց հետո, բնականաբար, առաջ է եկել սեփական օրենքներով և սովորություններով ղեկավարվելու համար դատաստանագիրք ունենալու հարցը, որպիսի իրավունք վերապահվում էր շնորհագրով։ Նոր օրենքների ժողովածու կազմելու անհրաժեշտությունը վերանում էր, քանի որ Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի հայ գաղութներում գործածության մեջ էր նման պահանջներ բավարարող մի դատաստանագիրք։ «Աստրախանի հայոց դատաստանագրքի» կամ ուղղակի՝ «Հայկական դատաստանագրքի» (կազմվել է 1765 թ.) հեղինակները թեպետ իրենց օգտագործած դրավոր աղբյուրներից առաջինը հիշատակում են Հուստինիանոսի օրենսգիրքը, սակայն ուսումնասիրությունից պարզվում է, որ աննշան չափով են օգտվել բյուզանդական կայսրի օրենքներից։ Նրանից բաղվածարար թարգմանված որոշ հոդվածներն էլ վերափոխվել և հարմարեցվել են ռուսահայերի տնտեսական և քաղաքական պայմաններին։ «Հայկական դատաստանագրքի» վրա առավելապես զգացվում է ազգային սովորութային նորմերի, Մխիթար Գոշի Դատաստանագրքի և ռուսական օրենքների ու ընդհանրապես ռուսական միջավայրի ազդեցությունը[28]։

Մագիստրատում դատավարությունը, ինչպես նաև ամբողջ գործավարությունը կատարվել է հայերեն լեզվով «Հայկական դատաստանագրքի» հիման վրա, որը 1782 թ. Հ. Արղությանը Աստրախանից բերել էր Նոր-Նախիջևան[29]։ Թեպետ «Դատաստանագիրքը» առանձին մարդկանց հեղինակությամբ էր ստեղծված, սակայն այն ճանաչվել է պետության կողմից, պարտադիր օրենքի ուժ է ունեցել և Նոր-Նախիջևանի գաղութում կիրառվել մինչև անցյալ դարի 60-ական թթ. վերջը։

Հարկավ, Հ. Արղությանին, պաշտոնի բերումով, մտահոգում էր գաղութի հոգևոր իշխանության և նրա իրավասությունների հարցը. ուստի մագիստրատի հաստատումից անմիջապես հետո

---

24 Նույն տեղում, էջ 4։

25 Ատամանը կապակական մարդերում ռազմա-վարչական պաշտոնյա էր։ Դոնի կազակային շրջապատի ազդեցության տակ հայկական գյուղերի պետերն էլ էին կոչվում ատաման, սակայն, աղավաղվելով այն օտոման ձևն էր ստանում։

26 Տե՛ս «Լույս», շարաթաթերթ, 1914, № 10։

27 «Դատաստանագրքի» մասին տե՛ս Ֆ. Պողոսյան, Աստրախանի հայոց դատաստանագիրքը, «Բանբեր մատենադարանի», № 6, Երևան, 1962, էջ 171—195։

28 Центральный Гос. архив Октябрьской революции, ф. 109, 1866 г., д. 5. ч. 47. л. 25.

Նա ձեռնամուխ է լինում հոգևոր դատարան հիմնելու գործին։ 1781 թ. Պետերբուրգից ռուսահայերի հոգևոր առաջնորդը գրում էր. «Արդ տեսանեմք որ ի մեջ քաղաքիդ մերայինքն զկառավարութիւնս իւրեանց թերի ունին և յորժամ ի ձեռին միոյ է իշխանութիւն, խանգարիչ լինի կարգաց քան թե պահպանող, և ոչ բարեպես աստուած է ի գործ զհոգևորն իշխանութիւն, ուստի բարւոք համարեցաք առնել ըստ օրինի Նախիջևանա Նորաշէն քաղաքին, լինել հոգևոր դատարան և ի նմա չորս անձինք նստիլ և ի միասին տեսանել զամենայն ինչ»[30]։ Նույն թվականին հայ հին եկեղեցական կանոններից ծաղկաքաղ անելու և ռուսահայ կյանքի տեղական պահանջներին համարեցնելու եղանակով նա կազմում է հոգևոր դատարանի կանոնները[31]։ Այդ կանոնները Նախիջևանից զատ կիրառվել են նաև մյուս գաղթօջախներում՝ մինչև 1836 թ., եկեղեցու ընդհանուր նոր կանոնադրության (Положение-ի) հաստատումը։ Դրանք բաղկացած են վեց մասից և վերաբերում են եկեղեցու աստիճանավորների պարտավորություններին ու իրավասություններին, ժողովրդից հասույթ գանձելու կարգին, ծրուսաղեմից եկած նվիրակներին, հոգևոր դատարանի կառավարման եղանակին։

Ուշագրավ է, որ կանոնների մի ամբողջ բաժին նվիրված է Էջմիածնի մայր Աթոռին։ Հ. Արղությանը՝ XVIII դարի ազատագրական շարժման նշանավոր գործիչներից մեկը, լավ էր ըմբռնում, որ հայ պետականության բացակայության պայմաններում հայ եկեղեցին է համազգային այն հաստատությունը, որը կարող է և անգամ կոչված է ազգային-քաղաքական հարցերը լուծելու համար հարաբերությունների մեջ մտնել ռուսական արքունիքի հետ։ Այդ նպատակով էլ նա ամեն կերպ ձգտել է բարձրացնել Էջմիածնի դերն ու հեղինակությունը իրեն ենթակա հայ գաղթօջախներում։

Հոգևոր դատարանի կանոնադրությամբ ռուսահայերի առաջնորդը փորձում էր կարգավորել եկեղեցու և աշխարհիկ իշխանության փոխհարաբերությունները։ Նրան առաջին հերթին մտահոգում էր եկեղեցուն որոշակի իրավունքներ տալու և աշխարհիկ կառավարչության միջամտությունից այն զերծ պահելու խնդիրը։ Վերոհիշյալ կանոններում իր այդ ձգտումը նա հայտնում է անսքող կերպով. «Զի այսուհետև Մագիստրաթն չունիցի իշխանութիւն այն անձանց բաչրօրթ տալ, զի հոգևոր դատարանին է այն գործն. Եւ որպես հոգևոր դատարանն չունի իշխանութիւն խառնիլ ի գործս մագիստրաթին, նոյնպես Մագիստրաթն եւ տումն (դուման — Վ. Բ.) չունին իշխանութիւն բնաւին խառնիլ ի գործս հոգևոր դատարանին, ըստ բարձրագոյն հրամանի իւրոհւոյ կայսերական Մեծութեանն»[32]։

Այն կարևոր դերը, որ կատարում էր ռուսահայ թեմի առաջնորդը Ռուսաստանի ողջ հայ բնակչության կյանքում, Արղությանը փորձում էր տարածել առանձին գաղթօջախների հոգևոր իշխանությունների վրա ևս, որպեսզի վերջիններս նույն իրավունքներից օգտվեին և համանման դեր կատարեին։ Դա անիրականանալի ձգտում էր, քանի որ տեղերում տնտեսական, սոցիալական հարցերն էին գերակշռում, որոնց փաստական ղեկավարությունը գտնվում էր աշխարհիկ իշխանության իրավասության ներքո։ Այդ պատճառով էլ Նոր-Նախիջևանի հոգևոր դատարանը, չնայած Հ. Արղությանի ջանքերին ու տված լայն իրավունքներին, որևէ նշանակալից դեր չխաղաց։ Ավելին, հիմնադրվելուց փոքր-ինչ հետո աստիճանաբար նվազել է նրա կշիռը, սահմանափակվել գործունեության ոլորտը, իսկ Արղությանի մահից հետո (1801 թ.) հոգևոր դատարանն ուղղակի գործիք է դարձել մագիստրատի և քաղաքագլխի ձեռքին։ Չնայած դրան, գաղթօջախում, սկզբնավորման շրջանից ընդհուպ մինչև անցյալ դարի կեսերը, կղերա-աղայական հոսանքը բավական զորեղ կերպով իրեն զգացնել էր տալիս և հաճախ քաղաքային վարչությունը իր ձեռքն էր վերցնում կամ իր ազդեցության տակ պահում։

1785 թ. ողջ Ռուսաստանում քաղաքներին վերաբերող կայսերական հրովարտակ է հրապարակվում, որով վերափոխվում են քաղաքային հասարակության կառուցվածքը, նրա ինքնավարության ֆունկցիաները։ Քաղաքների կառավարման նոր ձևը, որն անփոփոխ մնաց մինչև 1870 թ., հիմնականում արտոնություններ էր տալիս խոշոր վաճառականներին ու արդյունաբերողներին և պաշտպանում նրանց շահերը։

Հ. Արղությանը, հենվելով առանձնաշնորհումների վրա, կարողանում է խափանել նոր օրենքի անմիջական գործադրությունը Նոր-Նախիջևանում։ Սակայն անհրաժեշտ էր ստեղծել պետության այս օրենքին համապատասխան և միաժամանակ Նոր-Նախիջևանի առանձնաշնորհումների

30 Մատենադարան, ձեռ. № 4496, թ. 27։

31 Կանոնները հրատարակվել են «Մասյաց աղավնի» ամսագրի 1864—1865 թթ. համարներում։

32 «Մասյաց աղավնի», 1865, հուլիս, էջ 163։

տգուն համերաշխող քաղաքային իշխանության նոր օրդան։ Այդ նպատակով Հ. Արդությանը կազմում է 13 հոդվածից բաղկացած «Դաշնադրության միաբանություն» վերտառությամբ կանոնադրությունը, որի հիման վրա 1795 թ. մայիսի 26-ին կազմակերպվում է հոգաբարձությունը՝ քաղաքային գուման կամ խորհրդարանը[33]։ Նոր-Նախիջևանի քաղաքային խորհրդարանը կազմված էր 24 հոգաբարձուներից, որոնք եռամյա ժամկետով ընտրվում էին հայ հասարակության «պատվավոր» քաղաքացիներից և մագիստրատի հինգ դատավորներից։ Նրանք ամեն շաբաթ օր հավաքվում էին մագիստրատում և քաղաքագլխի նախագահությամբ քաղաքի բարեկարգման վերաբերյալ նիստեր գումարում։

Այսպիսով, Նոր-Նախիջևանի հայաբնակ գաղութը հենց սկզբնավորման շրջանում իրեն տրված առանձնաշնորհումների համապատասխան ինքնավարություն ստացավ և ներքին կառավարման օրգաններ հիմնեց, որոնք առաջնորդվում էին իրավական ուժ ստացած ազգային ավանդներով և սովորութային նորմերով։

Ղրիմահայերի գաղթի կազմակերպման և նոր բնակավայրում հաստատվելու շրջանում ակտիվ մասնակցություն ցուցաբերած անձնավորությունները ամենից առաջ մտահոգվել էին սեփական դասային իրավունքները ու արտոնությունները պահպանելու և ամրապնդելու խնդրով։ Թե՛ «կոնդիցիաներ»-ում և թե՛ կայսերական առանձնաշնորհումների մեջ առաջին հերթին, ինչպես նշեցինք, նկատի էին առնված վերնախավերի շահերը։ Առանձնաշնորհումների ոգով ու նրա հիման վրա ձևավորված ինքնավարությունը լայն պայմաններ էր ընձեռում գաղթօջախի իշխող բարձունքները վաճառականության և ընդհանրապես տնտեսական հզոր վերնախավի ձեռքում կենտրոնացնելու համար. Միևնույն ժամանակ կայսերական առանձնաշնորհումները սոցիալական անդունդի վերին աստիճաններում կանգնած արտոնյալ խավերին ընձեռում էին այլ հնարավորություն ևս։ Գաղութի ինքնավար օրգանները, ազատ լինելով պետական ընդհանուր օրենքների կիրառման պարտադիր շրջանակներից, հնարավորություն ևս ստանում ընդարձակել իրենց իշխանության սահմանները, հետևաբար և գաղութի ներսում տարբեր բնույթի և մասշտաբի օրինազանցություններ կատարել։ Նոր-Նախիջևանի հետագա շրջանի, մասնավորապես XIX դարի կեսերի պատմությունը առլեցուն է նման, հաճախ գաղութի նեղ շրջանակներից դուրս եկող, անգամ համազգային բնույթ ստացող իրադարձություններով։

[33] Տե՛ս ЦГИА СССР, ф. 1374, оп. 1, д. 25, էջ 10—14։